



ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հյուրանոցային ծառայությունների մատուցման դեպքում ծառայության մատուցման պահի և հաշվարկային փաստաթղթի դուրս գրման վերաբերյալ

Հարց

ՀՀ ռեզիդենտ ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը հյուրանոցային ծառայություններ է մատուցում ՀՀ տարածքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրենց կողմից ամրագրված ժամանակահատվածի համար, օրինակ 27.05.2019-07.06.2019թթ. ժամանակահատվածի համար: Նշված դեպքում ե՞րբ պետք է դուրս գրվի հաշվարկային փաստաթուղթը և ե՞րբ պետք է ճանաչվի մատուցված ծառայությունների գծով եկամտի ստացման իրավունքը:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 40-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե օրենսգրքով այլ բան սահմանված չէ, ապա նույն հոդվածի 1-3-րդ մասերում չնշված աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պահ է համարվում նույն մասում նշված առավել վաղ առաջացող պահը.

1) այն պահը, երբ՝

ա. աշխատանք կատարողը աշխատանքի կատարման արդյունքի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցում է աշխատանքն ընդունողին,

բ. ծառայություն մատուցողն ավարտում է ծառայություն ստացողի օգտին գործողության իրականացումը (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի),

գ. ծառայություն մատուցողը ոչ նյութական ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցում է ծառայություն ստացողին.



2) աշխատանքն ընդունողը և (կամ) ծառայությունը ստացողը հաստատում է աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի մասով աշխատանք կատարողի և (կամ) ծառայություն մատուցողի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը,

- 40-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 1-3-րդ մասերում չնշված աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պահը հնարավոր չէ որոշել նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով, ապա այդ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պահ է համարվում այն պահը, երբ աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման պայմանագրին համապատասխան, իրավունք է ձեռք բերել, չվերադարձնելով նախկինում ստացված՝ աշխատանքի չկատարված մասին և (կամ) ծառայության չմատուցված մասին համապատասխանող գումարը (բացառությամբ օրենքով նախաճար համարվող գումարի), դադարեցնել աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը,

- 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքների մասով պարտավոր են դուրս գրել օրենսգրքով սահմանված համապատասխան հաշվարկային փաստաթղթեր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ կազմակերպության կողմից որևէ հաշվետու ժամանակաշրջանում մատուցվող հյուրանոցային ծառայությունների մասով ԱԱՀ-ի պարտավորությունները (ըստ համապատասխան օրերի) հաշվարկվում և արտացոլվում են համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկում, իսկ հաշվարկային փաստաթուղթը դուրս է գրվում յուրաքանչյուր օրվա համար, եթե ծառայություն մատուցողն ավարտում է ծառայություն ստացողի օգտին գործողության իրականացումն ըստ օրերի: Իսկ երբ պայմանագրով սահմանված է, որ տվյալ դեպքում ծառայություն մատուցողն ավարտում է ծառայություն ստացողի օգտին գործողության իրականացումը 07.06.2019թթ.-ին, ապա ծառայության մատուցման պահ է համարվում 07.06.2019թթ. և տվյալ գործարքի մասով հաշվարկային փաստաթղթում որպես ծառայության մատուցման ամսաթիվ նշվում է 07.06.2019թթ.:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

